## ԸՆՏԱՆԻՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ . ԱՌԱՋ ՄՏԱԾԵԼ

Սեպտեմբերի 11-ը նշում է New York և Washington քաղաքների տեռորիստական հարձակման տարեդարձը: Դժբախտաբար, վտանգները կարող են լինել միշտ և լինում է քիչ ժամանակ և նախազգուշացում նախապատրաստվելու համար: Պատրաստվելու համար աղետի համար, պետք է ստեղծել Ընտանիքի Նախապատրաստման Ծրագիր: Սովորեցնելով այս ծրագիրը ընտանիքի բոլոր անդամներին կօգնի բարձրացնելու ընտանիքի ազդեցությունը և պակասեցնելու շտապ օգնության ճնշումը:

Ներքևում տրվում են քայլեր, որոնք կօգնեն ձեր ընտանքին պատրաստվել շտապ օգնության համար: Այս քայլերը պարունակում են, թե ինչպես սովորեցնել ձեզ և ձեր ընտանիքի անդամներին, ստեղծել ընտանիքի նախապատրաստման ծրագիր, ստեղծել ընտանիքի հաղորդակցության ծրագիր, պատրաստել շտապ օգնության նյութերի արկղ, տեղեկություն ունենալ շտապ օգնության հետ կապված թեմաների և աշխատանքների մասին: Ընտանիքի հաղորդակցության քարտը (Ընտանիքի նախապատրաստման քարտը) ծնողների և հոգացողների համար, լրացնելու և նայելու համար, հնարավոր է ինտերնետով (www.nctsn.org).

### ԿՐԹԵԼ ՁԵԶ ԵՎ ՁԵՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ

- ❑ Սովորեք, թե ինչ կարող է անել աղետը ձեր շրջանում (օր. երկրաշարժ, փոթորիկ, ջրհեղեղ, հրդեհ):
- ❑ Սովորեք, թե ինչ վտանգավոր բաներ են գտվում ձեր շրջանում (օր. ամբարտակ, քիմիական գործարան, կամուրջներ):
- ❑ Սովորեք, թե որտեղ են գտնվում ձեր էվակուացման ապաստարանները:
- ❑ Սովորեք ձեր համայնքի էվակուացման ճանապարհները:
- ❑ Սովորեք ձեր աղետի պլանը ձեր աշխատանքի վայրում:
- ❑ Սովորեք ձեր աղետի պլանը ձեր երեխայի դպրոցում, ներառյալ դպրոցի պլանները վերամիավորելու համար երեխաներին և նրանց ընտանիքներին, եթե աղետը պատահի դպրոցի ժամերի ընթացքում:

### ՍՏԵՂԾԵԼ ԸՆՏԱՆԻՔԻ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

- ❑ Կազմակերպեք ընտանեկան ժողով, ստեղծելու համար շտապ օգնության ծրագիր:
- ❑ Համոզված եղեք, որ բոլորը գիտեն այս ծրագիրը:
- ❑ Նշեք երկու ճանապարհներ դուրս գալու համար տնից, եթե ցանկանում եք հեռանալ:
- ❑ Նշեք ձեր տան ապահով տեղերը, եթե ցանկանում եք մնալ ներսում:
- ❑ Նշեք տեղերը ձեր ընտանիքի համար, եթե նույնիսկ ձեզնից ոչ մեկը չի գտնվում աղետի ժամանակ:
    - Ընտրեք մեկ տեղ ձեր թաղամասում:
    - Ընտրեք մեկ տեղ ձեր թաղամասից դուրս:
- ❑ Նշեք ընտանիքի հետ կապվող անդամի անունը (հարևան, ընկեր, կամ ազգական) երբ ձեր ընտանիքի անդամը կարող է կապ հաստատել բաժանության համար:
- ❑ Նշեք կապվող անդամի անունը ձեր նահանգից դուրս:
- ❑ Գրեք կապվող անդամի անունները և հեռախոսի համարները ձեր Ընտանիքի Նախապատրաստման Քարտի մեջ:
- ❑ Մի պլան կազմեք ձեր կենդանիներին ապահով պահելու համար:
- ❑ Պատրաստեք շտապ օգնության իրերի մի տոպրակ ձեր տան համար, մեքենայի և աշխատատեղի համար:
- ❑ Իմացեք ինչպես անջատել էլեկտրականությունը, գազը և ջուրը:

### ՈՒՆԵՑԵՔԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

- ❑ Լրացրեք և կրեք Ընտանիքի Նախապատրաստության Քարտը:
- ❑ Համոզված եղեք, որ ընտանիքի բոլորը անդամները գիտեն հեռախոսի կարևոր համարները: Սրանք կարող են ընդգրկել.

    Դպրոց, Խնամք Դասերից հետո, Երեխայի Ձեռքի Հեռախոս, Ընտանիքի/Աշխատանքի Ձեռքի Հեռախոս, Ազգական/Ընկեր, Նահանգի Շտապ Օգնության Կապ, Բժիշկ, Հիվանդանոց, Առողջապահություն, Հրշեջ Կայան, Ոստիկանության Տեղեկություն (ոչ շտապ օգնության համարներ – օգտագործեք

միայն 911 կյանքը սպառնացող շտապ օգնության համար), Դեղատուն, Մտավոր Հիմնարկություն, Անասնաբուժություն, Տեղի Կարմիր Խաչ, Ճանապարհի Դրությունններ:

## ՊԱՏՐԱՍՏԵՔնՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՊԱՇԱՐԱՆԵՐԻ ՏՈՒՓ

- **Առաջ Մտածել:** Ձեր ընտանիքը կարիք ունի պաշարները գոյատևելու երեք օր: Դրանք դրեք հատուկ ամանների մեջ, որ հեշտ լինի տանել: Դուք կարող է կարիք ունենաք մեկից ավելի ամանների, եթե ունեք մեծ ընտանիք: Պահեք ձեր պաշարների տուփը մի ապահով տեղ:
- **Սնունդ և Ջուր:** Ունեցեք մեկ գալոն ջուր ամեն մի անդամի համար ամեն օր: Փաթաթեք սնունդը, որ չփչանա և կարիք չկա եփելու: Պահածո արտադրանքների համար ունեցեք ձեռքի բացիչներ: Վերցրեք երեխայի սնունդ, եթե անհրաժեշտ է, սնունդ և ջուր յուրաքանչյուր կենդանու համար:
- **Վերմակ:** Ունեցեք մեկ տաք վերմակ ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար:
- **Գործիքներ:** Վերցրեք գրպանի էլեկտրական լապտեր և լրացուցիչ մարտկոցներ ձեր պայուսակի մեջ: Ունեցեք  շարժական ռադիո լրացուցիչ մարտկոցներով: Ունեցեք հատուկ բանալի գազը, ջուրը և հոսանքը անջատելու համար:
- **Առաջին օգնության պայուսակ:** Ունեցեք առաջին օգնության պայուսակ, ներառյալ որևէ մի դեղագիր, որ կարիք ունի ձեր ընտանիքը: Ավելացրեք մի լրացուցիչ ակնոց ընտանիքի անդամների համար իր նշանակված ոսպնյակներով:
- **Սանիտարական պաշարներ:** Ունեցեք զուգարանի թուղթ, կանանց վերաբերվող իրեր, մաքրիչներ և հակա-բակտերիական ձեռքի քսուկներ:  Գործածեք պլաստիկ աղբի տոպրակները օգտագործված սննդի համար և այլ նյութերի համար, ինչպես կեղտոտ ներքնազգեստները:
- **Անձնական իրեր:** Համոզված եղեք, որ ունեք ավտոմեքենայի և տան լրացուցիչ բանալիներ: Ունեցեք քրեդիտ քարտ և կանխիկ դրամ: Ունեցեք ընտանիքին վերաբերվող կարևոր փաստաթղթեր (անձնագիր, սոցիալ ապահովագրության քարտ, ապահովագրության տեղեկություն և այլն):
- **Լրացուցիչ իրեր:** Շտապ օգնության դեպքում, դուք կարող է մնաք ապահով տեղում մի քանի օր, այնպես որ պատրաստեք գիրք, խաղալու քարտեր, գծիչներ կամ մատիտներ:

## ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼ

Շտապ օգնության ժամանակ կամ հետո, տեղյակ եղեք վերջին րոպեի վտանգի և ապահովության մասին (օր. վտանգավոր պայմաններ, դպրոցի փակում, վերջին էվակուացման պլաններ) ռադիոյով, հեռուստատեսությամբ և անհրաժեշտ հեռախոսի համարներով:

## ՊՐԱԿՏԻԿԱ

Ամեն վեց ամիս.

- ❑ Նորոգեք և թարմացրեք ձեր աղետի տուփիկը:
- ❑ Վերանայեք ձեր աղետի պլանը ձեր ամբողջ ընտանիքի հետ:

Տարին մեկ անգամ.

- ❑ Վարժվեք ձեր ընտանիքի շտապ օգնության պլանի հետ:
- ❑ Նորոգեք ձեր Ընտանիքի Նախապատրաստման  Քարտը:
- ❑ Ստուգեք ձեր հրդեհի կրակմարիչը:

Շտապ օգնության մասին տեղեկություն ստանալու համար, ինչպես նաև աղետի նախապատրաստության մասին տեղեկություն ստանալու համար ձեր շրջանում, կապ հաստատեք ձեր տեղի Ամերիկյան Կարմիր Խաչի Ընկերության հետ կամ օգտագործեք ինտերնետ (www.redcross.org):

Մնացած օգտակար տեղերը շտապ օգնության համար հետևյալն են.

www.ready.gov     www.NCTSN.org     www.ready.gov/kids     www.cdc.gov/disasters/index.html